ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱՐԱՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա.

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով և Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ սկսվեց նոր դարաշրջան հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքում, հզոր դարկ տրվեց գիտության և, մասնավորապես, պատմագիտության զարգացման՝ մարքս-լենինյան ուղիով։

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության խնդիրների մշակման բնագավառում սովետահայ պատմագրության ներգրումը հատուկ տեղ է գրավում. ուշադրության կենտրոն դարձան այնպիսի պրոբլեմներ, որոնք ամբողջությամբ, կամ մեծ մասամբ, շրջանցվում էին նախասովետական հայ պատմագրության մեջ։ Անցած տասնամյակների ընթացքում կատարված հետազոտական աշխատանքում կարևորագույն տեղ են գրավել այնպիսի միանգամայն նոր խնդիրներ, որպիսիք են հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական զարգացումը, որն ընկած է պատմական պրոցեսի հիմքում, և սոցիալական-դասակարգային պայքարը՝ պատմության մղիչ ուժը։

Միևնույն ժամանակ խոշոր նվաճումներ են ձեռք բերվել նաև այնպիսի խնդիրների մշակման բնագավառում, որոնց նկատմամբ որոշակի հաջողություններ էր հասել դեռևս նախասովետական հայ պատմագրությունը, այն է՝ քաղաքական պատմության, մշակույթի պատմության, օտարի տիրապետության դեմ պայքարի պատմության, հնագիտության, աղբյուրագիտության, վիմագրության և պատմական այլ օժանդակ գիտությունների բնագավառում։

Ներկա հոդվածը այդ նվաճումները ի մի բերելու սոսկ նախնական փորձ լինելով, ի վիճակի չէ, իհարկե, սպառել սովետահայ պատմագիտության արծարծած բոլոր խնդիրները և դրանց նվիրված բոլոր աշխատությունները (այդ մնում է ապագային)։ Այն նպատակ ունի տալու անցած ուղու միայն ընդհանուր պատկերը։

1. Հին Հայաստանի պատմությունը

Հին Հայաստանի պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև մ. թ. IV—V դարերը), որպես հայ ժողովրդի պատմության առանձին մասնաճյուղ, հայագիտական առավել երիտասարդ առարկաներից մեկն է։ Նախապես այն ուսումնասիրվել է միջնադարյան Հայաստանի պատմության հետ միասնաբար։ Մարքսիստական մեթոդաբանությամբ գինված սովետահայ պատմագիտությունն է, որ պարզորոշ կերպով ի հայտ է բերել երկու այդ խոշոր դարաշրջան-

ների տարբերիչ առանձնահատկությունները ինչպես սոցիալ-տնտեսական ու հասարակական կարգերի, այնպես էլ պետական կառուցվածքի ու մշակույթի բնագավառներում։

Անցած տասնամյակների ընթացքում հրատարակված մենագրություններն ու հոդվածները, ինչպես և ընդհանրացնող աշխատությունները նվիրված են եղել հիմնականում չորս կարևորագույն պրոբլեմների. հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը, հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգերը, նրա քաղաքական պատմությունը, վերջապես, աղբյուրագիտությունը։

* *

Նախասովետական պատմագրությունը ձեռք էր բերել որոշակի նվաճումներ հայոց լեզվի բնույթի և նրա ազգակցական կապերի բացահայտման ասպարեզում, սակայն միաժամանակ նրան հատուկ էր հայ ժողովրդի ծագման ու կազմավորման բարդ պատկերի պարզունակացումը, որն արտահայտվում էր ժողովրդի ծագման և լեզվի ծագման պրոցեսների նույնացմամբ, ինչպես նաև հայ ժողովրդի ներգաղթած, հնդեվրոպական տարրի դերի գերագնահատմամբ։ Այս տեսակետը սովետահայ պատմագրության մեջ մտցվեց Խ. Սամվելյանի, Հր. Աճառյանի[1] և Հ. Մանանդյանի[2] կողմից։

Հայ ժողովրդի ծագման խնդրի հետագա ուսումնասիրությունը (40-ական թթ.), որ կրում էր Ն. Յա. Մառի տեսության ազդեցությունը, աչքի էր ընկնում մեկ այլ ծայրահեղությամբ՝ ժողովուրդների տեղաշարժերի դերի և դրանով իսկ՝ հայ ժողովրդի կազմավորման մեջ հնդեվրոպական տարրի մասնակցության անտեսմամբ կամ, առնվազն, թերագնահատմամբ[3]։

Դրա հետ մեկտեղ այս ժամանակաշրջանի մեծ նվաճում էր այն, որ փաստորեն սկիզբ դրվեց հայ ժողովրդի կազմավորման ընթացքի մեջ ներգրավված ու նրա բաղադրիչները դարձած տեղական ցեղերի ու երկրների (ամենից առաջ Վանի թագավորության՝ Ուրարտուի)* ուսումնասիրմանը։ Սևեռուն ուշադրության առարկա է դառնում նաև Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանների էթնա-լեզվական իրադրությունը։ Այդ շրջաններից էր, մասնավորապես, Հայասան, որը դիտվում է որպես հայ ժողովրդի բնօրրան։ Հատուկ մենագրության մեջ Գ. Ղափանցյանը ուսումնասիրեց Հայասայի ոնձնանունները, տեղանունները, պանթեոնը, քաղաքական պատմությունը և խեթական թագավորության հետ նրա ունեցած փոխհարաբերությունների պատմությունը, ինչպես նաև որոշ ոչ հայասական ցեղերի, հատկապես արմենների (արմիններ,

---

1 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1, Երևան, 1931։ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 1, Երևան, 1940։

2 Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, գլ. 1—11։

3 Г. А. Капанцян, К происхождению армянского языка, Ереван, 1946. Ա. Ս. Ղարիբյան, Հայ ժողովրդի պատմության սկզբնավորման շրջանը, «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1946, № 9։ Բ. Ն. Առաքելյան, Միգրացիոն տեսությունը և հայ ժողովրդի առաջացման հարցը, Երևան, 1948։

* Սովետահայ պատմագրության ներդրումը Վանի թագավորության պատմության ու լեզվի ուսումնասիրության մեջ առանձին խնդիր է, որն այստեղ չի արծարծվում։

որոնք Գ. Ղափանցյանի կարծիքով խուրրիներ էին) դերը հայ ժողովրդի կազմավորման մեջ[4]։

Բ. Բ. Պիոտրովսկին Ուրարտուի պատմության հարցերի մանրակրկիտ հետազոտությանը զուգընթաց հատուկ քննության ենթարկեց ուրարտական արձանագրություններում հիշատակվող Արմե երկիրը՝ որպես հայկական ցեղերի օջախ[5]։

40-ական թթ. ընթացքում ձևավորված տեսակետը ելակետ է դառնում նաև Ս. Տ. Երեմյանի համար[6]։ Նրա հետագա աշխատանքում, սակայն, որը նվիրված էր Արմե-Շուպրիա դեղային միությանն ուսումնասիրմանը, այդ տեսակետը էական փոփոխություններ է կրում։ Հայկական ցեղերի այդ երկրորդ (Հայաստայից հետո) հնագույն միավորումն և հայ ժողովրդի կազմավորման ընթացքի մեջ նրա ունեցած դերի մանրամասն քննարկմանը նախորդում է այն կարծիքի շարադրումը, թե միավորման ցեղերից մեկը՝ մուշկերը (միսիացիները) փռյուգիացիներին աղգակից ցեղ են եղել և հայտնվելով Փոքր Ասիայում փռյուգիացիների հետ միասին, հաստատվել են Արմե-Շուպրիա երկրում։ Այսպիսի հարցադրումը ամենևին չէր նշանակում վերադարձ դեպի հին միգրացիոն տեսությունը. պարզապես այն հենվում էր նախորդ երկու ուղղությունների նվաճումների վրա։ Նույնը վերաբերում է նաև Ի. Մ. Դյակոնովի՝ քիչ ավելի վաղ հրապարակված աշխատությանը, որտեղ հստակորեն սահմանազատված են հայոց լեզվի և հայ ժողովրդի կազմավորման հարցերը[7]։ Ընդհանուր գծերով այս տեսակետին է հարում նաև ռումինացի հայագետ Վլադ Բընբցյանուի ուրվագծած պատկերը։ Վ. Բընբցյանուի աշխատությունը պարունակում է նաև հայ ժողովրդի կազմավորման խնդրին նվիրված ուսումնասիրությունների արժեքավոր տեսություն[9]։

Հ. Մանանդյանի 1956 թ. լույս տեսած աշխատության մեջ հանգամանորեն քննարկված են Հայասա երկրի և սրա բնակավայրերի տեղորոշման հարցերը[10]։ Իր աշխատություններում Գ. Ջահուկյանը ձգտում է ապացուցել, որ Հայասայի լեզուն և ուրարտերենը պատկանել են հնդեվրոպական լեզվաընտանիքին[11]։

---

4 Г. А. Капанцян, Хаиаса — колыбель армян (этногенез армян и их начальная история), Ереван, 1947.

5 Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946.

6 С. Т. Еремян, К вопросу об этногенезе армян, «Вопросы истории», 1952, № 7.

7 Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3։

8 Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փռյուգիացիները և հայերը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 11։ Նույնը՝ ռուսերեն, տե՛ս «Переднеазиатский сборник. Вопросы хеттологии и хурритологии», М., 1961.

9 Влад Бэнэцяну, Некоторые вопросы этногенеза армян. «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2։

10 Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Армении 3. Сообщения хеттских, ассирийских, урартских и древнеармянских источников о Хайаса-Аззи, Ереван, 1956.

11 Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, նաև անգլերեն՝ «Archi Orientální», 1961, № 3. Урартский и индоевропейские языки, Ереван, 1963.

Վերջին ժամանակներս նկատվում է հայ ժողովրդի ծագման խնդրի նրկատմամբ հետաքրքրության մի նոր ալիք, որը, համոզված ենք, նորանոր ելվահումներ կբերի այդ բարդ ու կարևոր պրոբլեմի լուծման ուղղությամբ։

* * *

Նախասովետական հայ պատմագրության մեջ հին Հայաստանի հասարակարգի ուսումնասիրության գործում ամենից ավելի էական ավանդ ունի Ն. Ադոնցը։ Նա առաջինն էր, որ գիտական հիմքերի վրա դրեց Հայաստանի ֆեոդալական կարգերի ուսումնասիրությունը, տալով վաղ ֆեոդալական Հայաստանի քաղաքական և սոցիալ-իրավական կառուցվածքի խոր վերլուծությունը։ Նախորդ ժամանակաշրջանի բնութագրման համար բավարար քանակությամբ տվյալներ չունենալով, Ն. Ադոնցը ֆեոդալական հասարակարգի քաղաքականն և իրավական կառուցվածքը կամա թե ակամա վերագրեց նաև հին Հայաստանին[12]։

Ն. Ադոնցի այս տեսակետն էլ հենց ելակետ հանդիսացավ Հ. Մանանդյանի համար։ Մանանդյանը, սակայն, էական ներդրումներ արեց այդ տեսության մեջ, մասնավորապես Հայաստանում ֆեոդալիզմի սկզբնավորության թվագրման, նախարարական կարգի ուսումնասիրության հարցերում և, որ գլխավորն է, հայ պատմագրության մեջ առաջինը անդրադարձավ նյութական բարիքներ արտադրողների՝ հիմնականում, բնականաբար, երկրագործ ազգաբնակչության վիճակին հին Հայաստանում[13]։ Առկա նյութերի ուսումնասիրությունը նրան հանգեցրեց այն եզրակացության, որ Արշակունյաց Հայաստանի գյուղացիությունը գտնվում էր «կիսազատ ճորտերի» վիճակում։ Հ. Մանանդյանն առաջինը շոշափեց նաև գյուղական համայնքի խնդիրը հին Հայաստանում, աղբյուրներում տվյալներ բացահայտելով համայնքի անդամների միջև հողը ըստ շնչի բաշխելու կարգի մասին[14]։ Հ. Մանանդյանի աշխատությունների շնորհիվ սովետական պատմագրությունը ընդհուպ մոտեցավ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգերի մարքսիստական ուսումնասիրմանը։ Անդրադառնալով ստրկատիրության խնդրին, Հ. Մանանդյանը պնդում էր, որ հին Հայաստանում այն նահապետական, տնային բնույթ է կրել և էական դեր չի խաղացել նյութական բարիքների արտադրության ասպարեզում։

---

12 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. Политическое положение на основе нахарарского строя. СПб, 1908.

13 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Երևան, 1934։ Մենագրությանը նախորդել էր 20-ական թթ. ընթացքում հրապարակված հոդվածաշարը (Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում, Երևան, 1925։ Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926։ Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, I, Երևան, 1927, II, Երևան, 1928)։

14 1925 թ. Ն. Ադոնցը արտասահմանում հանդես եկավ Հ. Մանանդյանի այն թեզի դեմ, թե հին Հայաստանում գոյություն է ունեցել գյուղական համայնք։ Այս առարկության ոչ իրավացի լինելը, սակայն, չի խանգարել, որ հեղինակն իր այս նոր աշխատության մեջ արտահայտի մի շարք արդյունավետ մտքեր հին Հայաստանի գյուղացիության վիճակի և հողային հարաբերությունների մասին և, մասնավորապես, I—IV դարերի հայ իրականությունը միջնադարյան Ֆրանսիայի հետ համեմատելու փոխարեն (ինչպես անում էր նախապես) այն, միանգամայն բնականորեն, համեմատության մեջ դնի նույն դարերի Արևելյան Հռոմեական կայսրության, հատկապես Հայաստանին սահմանակից Փոքր Ասիայի հետ։

Հայաստանում ստրկության և ստրկատիրության գոյության խնդրով անմիջականորեն զբաղվել է Խ. Սամվելյանը։ Նա բացահայտել է ստրուկների մի քանի կարգ՝ արքունական, ճորտացված, տնային և տաճարական, ուսումնասիրել է նրանց իրավավիճակը և եկել այն եզրակացության, որ ստրուկներն ունեին որոշ, թեև խիստ սահմանափակ, իրավունքներ։ Ռազմագերիների ստրկացման մասին թվական տվյալների վրա հենվելով, Խ. Սամվելյանը եզրակացնում է, որ ստրուկների թիվը հին Հայաստանում նշանակալի է եղել։ Չնայած այս ամենին, նա հետևում է «հավիտենական ֆեոդալիզմի» սխալ տեսակետին, ենթադրելով, թե ֆեոդալիզմը Հայաստանում հաստատվել է դեռևս նախաուրարտական շրջանում[15]։

Հին արևելյան հասարակությունների ստրկատիրական բնույթի մասին 30-ական թթ. սովետական պատմագրության մեջ մշակված տեսակետն իր արտահայտությունը գտավ նաև սովետահայ պատմագրության մեջ։ Ս. Երեմյանը, հենվելով նաև վերը հիշատակված հեղինակների աշխատությունների վրա, նոր տեսություն մշակեց հին Հայաստանի հասարակարգի մասին[16]։ Նա տվեց այդ կարգերի զարգացման պարբերացումը։ Ս. Տ. Երեմյանը ցույց տվեց, որ հին Հայաստանում տարածված դաստակերտներն ու ագարակները մասնավոր սեփականատիրական տնտեսություններ էին, ուր կիրառվում էր ստրուկի աշխատանքը. նա ուսումնասիրեց, մասամբ նաև հայտնաբերեց ստրկական վիճակը բնորոշող հայկական տերմինները, էական աշխատանք կատարեց նախաֆեոդալական հայ գյուղական համայնքի ուսումնասիրության ուղղությամբ։ Ս. Երեմյանը շոշափեց նաև հին Հայաստանի պետական կառուցվածքի ստրկատիրական բնույթի հարցը։

Նոր տեսակետը առաջ բերեց վիճաբանություններ, որոնք հետագայում վերաճեցին բանավեճի՝ հին Հայաստանի հասարակարգի և հին ու միջնադարյան Հայաստանի պատմության պարբերացման հարցերի կապակցությամբ։ Հ. Մանանդյանը գտնում էր, որ ստրկատիրական հասարակարգի գոյության մասիս տեսակետը լիովին հիմնված է մի կողմից հին Հայաստանի և մյուս կողմից անտիկ՝ հունական ու հռոմեական հասարակությունների կարգերի նույնացման վրա, մինչդեռ Հայաստանում, ի տարբերություն այդ հասարակությունների, արտադրության մեջ հիմնական դերը խաղում էին ոչ թե ստրուկները, այլ գյուղացի-համայնիկները[17]։ Այս փաստարկումը հետագայում պաշտպանեց Ս. Հակոբյանը[18]։ Ա. Աբրահամյանը հանդես եկավ ստրկատիրական հասարակարգի մասին տեսության պաշտպանությամբ[19]։

15 Խ. Սամուելյան, Ստրկությունը հին Հայաստանում, «Տեղեկագիր ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի», 1937, № 2։ Հայ հին իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939։

16 История СССР с древнейших времен до образования древнерусского государства (на правах рукописи), чч. I—II, М.—Л., 1939 (Ս. Երեմյանի բաժինը). С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистический период, «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1948, № 11; О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1.

17 Я. А. Манандян, Проблема общественного строя доаршакидской Армении, «Исторические записки», т 15, 1945.

18 Ս. Հակոբյան, Ստրկությունը և ստրկատիրական հասարակական ֆորմացիան հին Հայաստանում, «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1948, № 8։ Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, Վաղ ֆեոդալիզմի շրջան, Երևան, 1957։

19 Ա. Աբրահամյան, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի շուրջը, «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1947, № 2։

Սակայն սովետական պատմագրության հետագա զարգացման ընթացքում բացահայտվեցին ստրկատիրական հասարակարգերի այնպիսի ձևեր, մասնավորապես՝ Հին Արևելքում, որոնք իրենց զարգացման ընթացքում, ստրկատիրական մնալով հանդերձ, ամենևին էլ չէին կրկնում հին հունական և հռոմեական հասարակությունների զարգացման ուղին։ Նրանց բնորոշ էր, հատկապես, գյուղական համայնքի հսկայական տեսակարար կշիռը տնտեսության մեջ։

Հայաստանի ստրկատիրական հասարակության կոմպլեքսային ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ, ինչպես նաև «Ակնարկներ ՍՍՀՄ պատմության (III—IX դդ.)» գրքում զետեղված իր բաժնում, Ս. Երեմյանը ճշգրտեց իր դրույթները, ուժեղացրեց փաստարկումները, մասնավորապես ուշադրություն մեջ բերելով Հայաստանին սահմանակից երկրների նույն ժամանակաշրջանի պատմությունից[20]։

Գ. Սարգսյանը իր հիմնական ուշադրության առարկան դարձրեց հայ ստրկատիրական հասարակության և նրա զարգացման ուղու առանձնահատկությունների վերհանումը, բացահայտելով, որ նրան բնորոշ էր ոչ թե դասական ուղին՝ սաղմնավորում, ծաղկում և ճգնաժամ, այլ անհամաչափը, թռիչքաձևը[21]։

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության առանձին հարցերից առավել մեծ ուշադրության է արժանացել քաղաքների և քաղաքային կյանքի պատմությունը։ Հ. Մանանդյանի մենագրության մեջ առաջին անգամ ի մի բերվեցին հին և միջնադարյան Հայաստանի քաղաքների ու առևտրի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները։ Գրքում քննված է Հայաստանի քաղաքների առաջացման հարցը, հատկապես շեշտված է, գերագնահատման աստիճանի հասցվելով, նրանց որպես առևտրական կենտրոնների դերը, այլև տարանցիկ առևտրի դերը քաղաքների զարգացման կամ անկման մեջ։ Մանրամասնորեն քննված են նաև Հայաստանով անցնող առևտրական ճանապարհները[22]։

Իր հոդվածում Ս. Տ. Երեմյանը, քաղաքների առաջացման և նրանց առևտրական դերի հարցերից զատ, շոշափում է նաև քաղաքներում արհեստագործական արտադրության, նրա առանձին ճյուղերի զարգացման, արհեստագործության կազմակերպման, քաղաքների ներքին կառուցվածքի, կենտրոնական իշխանության հետ նրանց փոխհարաբերության թեմաները։ Ս. Տ. Երեմյանը սալիս է այն եզրակացության, որ հին Հայաստանի քաղաքները ստրկատիրական բնույթ ունեին[23]։

Այս հարցերի մի մասը ուսումնասիրել է Գ. Խ. Սարգսյանը, որը հին և հելլենիստական Արևելքի քաղաքային կյանքի ֆոնի վրա ուրվագծել է հին հայկական քաղաքային համայնքի նկարագիրը, նրա իրավական վիճակը պե-

---

20 С. Т. Еремян, Рабовладельческое общество древней Армении, М., 1953 (դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատ)։ Очерки истории СССР (III—IX вв.), М., 1958 (Ս. Երեմյանի բաժինը)։

21 Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962։

22 Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), Ереван, 1930, второе издание, Ереван, 1954.

23 С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3.

տության սիստեմում[24]։ Հին Հայաստանի քաղաքների զարգացման հարցերը քննարկված են նաև Ս. Կրկյաշարյանի հոդվածներում[25]։

Համանման մի խնդիր, սակայն արդեն հին հայկական տաճարների և նրանց տնտեսությունների կապակցությամբ, ուսումնասիրել է Ա. Գ. Փերիխանյանը, շատ ավելի հարուստ վիճքրաստական համաժամանակյա նյութի ֆոնի վրա[26]։

Ուսումնասիրողների ուշադրությունն է գրավել նաև հողային հարաբերությունների հարցը հին Հայաստանում։ Նրան հատուկ բաժիններ են նվիրված Հ. Մանանդյանի, Ս. Երեմյանի և մյուսների վերը հիշատակված ընդհանուր աշխատություններում, որոնցում ուսումնասիրված են գյուղացիության վիճակի, գյուղատնտեսության մեջ ստրկական աշխատանքի կիրառման և այլ հարցեր։ Ա. Փերիխանյանը լուսաբանել է հին Հայաստանի հողատիրական դասերից մեկի՝ ոստանիկների վերաբերյալ վիճելի հարցը[27]։

Հին և միջնադարյան Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հետ կապված հարցերի ամբողջությունը հետազոտել է Ս. Հակոբյանը՝ հայ գյուղացիության պատմությանը նվիրված իր աշխատության առաջին հատորում[28]։

Այսպիսով, հին Հայաստանի պատմության սոցիալ-տնտեսական խնդիրները եղել են սովետահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում։ Դրանց վրա տարվող աշխատանքը ընթացել է ինչպես ընդհանուր տեսությունն մշակելու, այնպես էլ առանձին խնդիրները հետազոտելու ուղղությամբ։ Եվ այսուհանդերձ, այդ երկու ուղղությամբ էլ դեռ կան շատ չլուծված հարցեր, որոնցով պետք է զբաղվել առաջիկա տարիներին։

* *

Սովետահայ պատմագրության ստացած գիտական ժառանգության առավել ծանրակշիռ և մշակված մասը հին Հայաստանի քաղաքական պատմությունն է։ Այս ասպարեզում հայ պատմագրության ունեցած ավանդույթները գալիս են վաղ միջնադարից։ Նոր ժամանակներում ևս քաղաքական պատմության գիտական ուսումնասիրությունը հասել է բարձր մակարդակի. նրա գագաթնակետն են Մ. Չամչյանի և Ա. Գարագաշյանի գործերը։

Սակայն այստեղ ևս սովետահայ պատմագրությունը ներդրել է իր էական ավանդները, որոնք կապված են նախ և առաջ Հ. Մանանդյանի անվան հետ։ Այս ասպարեզում նրա առաջին խոշոր ուսումնասիրությունն էր Տիգրան II-ի ժամանակաշրջանին նվիրված փայլուն մենագրությունը։ Բանավիճելով եվրոպակենտրոն գիտնականների հետ (Մոմզեն, Ռեյնաք և այլք), Հ. Մանանդ-

---

24 Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960.

25 С. М. Кркяшарян, Возникновение городов в Армении во II в. до н. э.—III в. н. э., «Научн. докл. высшей шк., Ист. науки», 1961, № 4. *Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1 և այլն։*

26 А. Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до н. э.—III в. н. э.), М., 1959.

27 А. Г. Периханян, Древнеармянские востанники. ВДИ, 1956, № 2.

28 *Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. I. Վաղ ֆեոդալիզմի շրջան, Երևան, 1957։*

յանը ցույց տվեց, որ Հայաստանի զարգացումն ու հզորացումը, ինչպես նաև հելլենիստական ավանդների ներթափանցումն ու հելլենիստական տիպի քաղաքների առաջացումը ոչ թե Տիգրան II-ի քմահաճույքների հետ կապված պատահական երևույթներ էին, այլ պատմական անհրաժեշտություն. նա ցույց տվեց, որ Տիգրան II-ի պայքարը Հռոմի դեմ ոչ թե բարբարոսի ընդվզում էր ընդդեմ Հռոմի քաղաքակրթիչ ազդեցության, այլ ընդհակառակը, հելլենիստական աշխարհի և Հայաստանի կուլտուրական նվաճումների պաշտպանություն էր։ Միանգամայն նոր լույսի ներքո հանդես բերեց Հ. Մանանդյանը նաև հայ-հռոմեական պատերազմի ողջ ընթացքը[29]։

Հետագայում այս մենագրությունը դարձավ Հ. Մանանդյանի՝ հայ ժողովրդի պատմությանը նվիրված կապիտալ բազմահատոր աշխատության առաջին հատորի կորիզ։ Այդ բազմահատոր աշխատությունը հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան շրջանի նորագույն ծավալուն և սիստեմատիկ շարադրանքն է[30]։ Աշխատության առանձնահատկությունն այն է, որ հեղինակն իր ուշադրությունը կենտրոնացրել է պատմության առավել թերի լուսաբանված հարցերի և ժամանակաշրջանների վրա. այսպիսի մոտեցման արդյունքն են այն բազմաթիվ բաժինները, որոնցում միանգամայն նորովի է լուսաբանվում պատմության ընթացքը։

Հ. Մանանդյանի կատարած ուսումնասիրություններին զուգընթաց գնալով ավելի էր մեծանում հայ ժողովրդի պատմության նոր, մարքսիստական շարադրանքն ստեղծելու անհրաժեշտությունը։ Արդեն 40-ական թթ. սկսած ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը կատարում էր այդպիսի դասընթաց ստեղծելու փորձեր, որոնք հաջողությամբ պսակվեցին 50-ական թթ.։ Հրատարակվեց հեղինակների կոլեկտիվի կողմից գրված եռահատոր ձեռնարկ, որի առաջին հատորը ընդգրկում էր հին և միջնադարյան Հայաստանի պատմությունը։ Հին Հայաստանին նվիրված բաժինների հեղինակն էր հիմնականում Ս. Տ. Երեմյանը։

Այս ձեռնարկի համար Ս. Տ. Երեմյանը հրատարակեց նաև ատլաս, որի մեջ արտացոլվեց հին հայկական պետության տերիտորիալ զարգացումը[31]։ Նրա քարտեզները ճանաչում գտան սովետական պատմագրության մեջ և զետեղված են միութենական մի շարք հրատարակություններում։

Վերոհիշյալ ձեռնարկից հետո հրատարակվեցին հայ ժողովրդի պատմության մասնագիտացված՝ դպրոցական և բուհական ձեռնարկների (վերջինում հին շրջանը հաջող կերպով շարադրել է Հ. Ժամկոչյանը), ինչպես նաև հայ ժողովրդի պատմության բազմահատոր կոլեկտիվ աշխատության պրոսպեկտը[32]։

---

29 Հ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Տիգրան Բ և Հռոմը։ Նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների, Երևան, 1940։ Նաև ռուսերեն, Երևան, 1943։

30 Հ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ. թ.), Երևան, 1944։ Հատ. Բ, մասն Ա, Արշակունիների հաստատումից Հայաստանում մինչև մարզպանության շրջանը (I—V դդ.), Երևան, 1957։

31 Երևան, 1952 (հայերեն և ռուսերեն)։ Առավել կատարելագործված վիճակում այդ քարտեզները լույս տեսան «Հայկական ՍՍՀ Ատլասում» (հայերեն և ռուսերեն, Երևան, 1961), քարտեզներ № № 101—111։

32 «Հայ ժողովրդի պատմություն», պրոսպեկտ, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, Երևան, 1961։ Ձեռագրի իրավունքով։

Մասնավոր հարցերին վերաբերող ուսումնասիրություններից անհրաժեշտ է մատնանշել Գ. Ա. Տիրացյանի հոդվածները, որոնք լուսաբանում են հայ ժողովրդի պատմության այնպիսի մութ ժամանակաշրջանը, ինչպիսին է Երվանդունիների շրջանը (VI—III դդ. մ. թ. ա.)։ Վերջերս հրատարակված հոդվածում Գ. Տիրացյանը ի մի է բերել հայկական պետականության սկզբնավորմանը վերաբերող գրավոր ու նյութական տվյալները և հանգել հետաքրքրական եզրակացությունների[33]։

Շապուհ Ա-ի արձանագրության ուսումնասիրությունը հնարավորություն է տվել Ս. Երեմյանին բացահայտելու Հայաստանի պատմության մի այլ մութ շրջանի՝ մ. թ. III դարի մի շարք դրվագներ[34]։

Հին հայ հասարակության ներսում սոցիալ-քաղաքական պայքարի լուսաբանմանը ևս նվիրված են հատուկ ուսումնասիրություններ։ Հ. Զորյանն այն տեսակետն է հայտնել, թե Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև 387 թ. պայմանավորված էր ոչ միայն արտաքին քաղաքական հանգամանքներով, այլ մեծ չափով նախապատրաստված էր նաև նախարարության և կենտրոնական իշխանության միջև մղվող սոցիալական պայքարով, որից պետությունը խիստ թուլացել էր[35]։ Այս հարցը հետագայում մշակեց Ս. Տ. Երեմյանը, հին Հայաստանի հասարակարգի մասին նոր տեսության տեսանկյունից[36]։

Այդ պայքարին ստորին խավերի ունեցած մասնակցության կարևոր հարցն առաջ քաշվեց Լ. Ս. Խաչիկյանի հատուկ ուսումնասիրության մեջ։ Հետաքրքրական են այդ կապակցությամբ նաև Հ. Մելքոնյանի հոդվածները[37]։

Որոշակի աշխատանք է կատարված հին Հայաստանի հոգևոր մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ։ Հին հայկական կրոնի հետազոտման բնագավառում կարևորագույն ներդրումներ են Գ. Կապանցյանի աշխատությունները՝ Արա Գեղեցիկի պաշտամունքի և խեթական կրոնի ազդեցության մասին ու Թ. Ավդալբեգյանի աշխատությունը՝ Միհրի պաշտամունքի մասին։ Հայ թատրոնի բազմադարյան պատմության վաղ շրջանը հետազոտել է Գ. Գոյանը[38]։

Հայկական աշխատանք է կատարվել հին Հայաստանի նյութական մշակույթի հուշարձանների ու նյութերի հայտնաբերման և ուսումնասիրման բնագավառում, որը, սակայն, առանձին ամփոփման առարկա է[39]։

---

33 Գ. Ա. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 6։ Կոմագենեն և Հայաստանը, նույն տեղում, 1956, № 3։ Հին հայկական պետության առաջացումը, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4 և այլն։

34 Ս. Տ. Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2։

35 Հակ. Զորյան, Ներդասակարգային պայքարը հայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում (330—387 թթ.), «ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր», 1936, գիրք 1։

36 Очерки истории СССР (III—IX вв.), М., 1958 (Ս. Տ. Երեմյանի բաժինը)։

37 Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար), Երևան, 1951։ Հ. Գ. Մելքոնյան, IV դարի Միջագետքի և Հայաստանի սոցիալական շարժումների պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 12 և այլն։

38 Г. А. Капанцян, Хеттские боги у армян, Ереван, 1940. Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944։ Թ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1921։ Г. Гоян, 2000 лет армянского театра, т. 1, Театр древней Армении, М., 1952.

39 Բ. Ն. Առաքելյան, Հին Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրությունը, «ՊԲՀ», 1963, № 2։

Հայ գրերի գյուտը V դարի սկզբին, որ կուլտուր-պատմական անգերագնահատելի նշանակություն ունեցող մի իրադարձություն էր, նույնպես եղել է սովետական պատմագրության ուշադրության կենտրոնում։ Հ. Մանանդյանի աշխատության մեջ բացահայտված է գրերի գյուտի նշանակությունը՝ իր կուլտուրական ինքնուրույնության համար հայ ժողովրդի մղած պայքարում[40]։ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի տոնակատարությունը 1962 թ. առիթ հանդիսացավ, որպեսզի սովետահայ մի շարք պատմաբաններ ու բանասերներ հանդես գան գիտական հոդվածներով, որոնցում քննարկվում էին գրերի գյուտը, նրա դարաշրջանը, նախադրյալները, ինչպես նաև այդ իրադարձության մերձավոր և հեռավոր հետևանքները հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր ճակատագրում[41]։

Չնայած կատարված աշխատանքին, հին Հայաստանի պատմության առանձին դարաշրջանների ավելի խոր, մարքսիստական ուսումնասիրման բացահայտ անհրաժեշտություն է զգացվում։ Այդպիսի ժամանակաշրջաններից են, մասնավորապես, մ. թ. II—IV դարերը, որոնք հարուստ են հասարակարգերի փոփոխմանը ուղեկցող սոցիալ-քաղաքական իրադարձություններով, մ. թ. ա. VI դ. և նրան հաջորդող ժամանակաշրջանը, երբ ձևավորվում ու իր առաջին քայլերն էր անում հայկական պետականությունը և այլն։

2. Միջնադարյան Հայաստանի պատմությունը

Մինչև 1930-ական թթ. վերջերը սովետահայ պատմագրության մեջ գերիշխում էր դեռևս նախասովետական շրջանում ձևավորված այն տեսակետը, որի համաձայն ֆեոդալիզմը Հայաստանում ծագել է տոհմատիրական կարգերի քայքայման հողի վրա, ըստ որում ֆեոդալիզմին անցնելու հիմնական պատճառներն էին համարվում արտաքին գործոնները (նվաճումները, ասպատակությունները, արմենների ներգաղթը), որոնք և պայմանավորել են դասակարգային շերտավորման և ֆեոդալական հողային հարաբերությունների առաջացումը։ Այս տեսության մեջ, որին սկիզբ է դրել Ն. Ադոնցը, ֆեոդալիզմը դիտվում է ոչ թե որպես արտադրության որոշակի եղանակ, այլ որպես քաղաքական և իրավական կազմակերպություն որոշակի ձև։ Հին և միջնադարյան Հայաստանը դիտվում էր որպես «հավիտենական ֆեոդալիզմի» երկիր, որտեղ ֆեոդալիզմը հաստատվել է դեռևս նախատուրատական շրջանում (Խ. Համվելյան, Լեո), կամ ետաքեմենյան շրջանում (Հ. Մանանդյան) և գոյատևել մինչև նոր շրջանը (XVIII—XIX դդ.)։

---

40 Հ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար, Երևան, 1962, նախապես՝ ռուսերեն, Երևան, 1941։

41 Գ. Ս ա կ, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1962, նաև ռուսերեն։ Կ. Ա. Մ ելի ք-Օ հ ա ն ջ ա ն յ ա ն, Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատ. ռուս. թարգմանության առաջաբան, Երևան, 1962։ Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1962, № 5, «Բանբեր Մատենադարանի», 1964, № 7 և «Էջմիածին»՝ 1962 թ. համարները։ «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ.։ «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1963, Երևանի պետհամալսարանի հրատ.։

Հ. Մանանդյանի և Խ. Սամվելյանի համապատասխան[42] աշխատություններում հանգամանորեն քննարկված են Հայաստանի ֆեոդալական հասարակարգի առանձնահատկությունները, ֆեոդալական հիերարխիան, դասակարգերի և դասերի (հատկապես գյուղացիության) սոցիալ-իրավական վիճակը, ագրարային հարաբերությունները, հողատիրության կատեգորիաները, ֆեոդալական շահագործման ձևերը, ֆեոդալական ռենտան, հարկային ինստիտուտները և շատ այլ հարցեր։ Հ. Մանանդյանը եկավ այն եզրակացության, որ հին և միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել և մեծ դեր է խաղացել գյուղական համայնքը։ Հ. Մանանդյանի որոշ դրույթները հետագայում մշակեցին նոր աղբյուրների հիման վրա և մասամբ զարգացրին Ս. Տ. Երեմյանը և Ս. Ե. Հակոբյանը[43]։

Միջնադարյան Հայաստանի հողատիրության ձևերի, հարկային ինստիտուտների, նրանց տերմինաբանության, արաբների հարկային քաղաքականության, արտադրական հարաբերությունների զարգացման, գյուղացիության սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի ու այլ հարցեր լուսաբանվել են Թ. Ավդալբեգյանի, Հ. Զորյանի, Բ. Հարությունյանի աշխատություններում[44]։

Ֆեոդալական հասարակության ծագման և նրա սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն և արդիական խնդիրների մշակումը մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա հիմնականում սկսվեց 40-ական թթ. Ս. Տ. Երեմյանը առաջինն էր, որ Հայաստանում ֆեոդալիզմի առաջացումը կապեց մ. թ. II—III դդ. ստրկատիրական կարգերի ճգնաժամի հետ[45]։

Եթե մինչև 1946-ական թթ. վերջերը սովետահայ պատմագրության ուշադրության կենտրոնում էր գերազանցապես վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրների ուսումնասիրությունը, ապա 50-ական թթ. սկզբից սկսվում է զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի հարցերի եռանդուն հետազոտությունը։

---

42 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934։ О торговле и городах Армении, Ереван, 1930։ Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում, Երևան, 1926։ Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, պրակ 1, Երևան, 1927, պրակ 2, Երևան, 1928։ Հայաստանի քաղաքները X—XI դարերում, Երևան, 1940 և այլն։ Խ. Սամուելյան, Հայ հին իրավունքի պատմություն, հատ. 1։

43 Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. I, II։

44 Թ. Ավդալբեգյան, Հաս. սակ ու բաժ, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1926, № 1։ Հայ շինականի և գեղջկուհու աշխատավարձը հինգերորդ դարում, նույն տեղում, 1928, № 3։ Գյուղատնտեսական մթերքների լրացուցիչ նորման XVII—XVIII դարերում և XIX դարի սկզբին, «Նորք», 1923, № 3։ Բահրան և մյուլքը XVII և XVIII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1։ Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան, Երևան, 1926։ Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1927, № 2։ Հ. Ն. Զորյան. Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, Երևանի պետհամալսարանի «Տեղեկագիր», 1927, № 2—3։ Արաբական տիրապետության շրջանում ֆեոդալական Հայաստանում գյուղի և քաղաքի միջև ստեղծված հակադրությունը, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1927—1928, № 2—3։ Բ. Մ. Հարությունյան, «feod»-ին և «beneficium»-ին համապատասխանող տերմինները հայ միջնադարյան գրականության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 7; Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по «Судебнику Мхитара Гоша», «Вопросы истории», 1952, № 8. Крупные монастырские хозяйства в Армении XVII—XVIII вв., Ереван, 1940.

45 Տե՛ս История СССР, т. I, М., 1939, и Очерки истории СССР III—IX вв., М., 1958.

Աշ. Հովհաննիսյանը, Ս. Երեմյանը, Ս. Պողոսյանը, Բ. Առաքելյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ իրենց աշխատություններում ցույց տվեցին, որ IX դ. սկզբին խոշոր ֆեոդալական իշխանությունների առաջացումը նշանավորել է ֆեոդալական քաղաքական մասնատվածության նոր փուլը, և արդեն IX դ. վերջում և X դարի սկզբում պայքարը դնացել է նրանց միավորման և միասնական պետության ստեղծման համար, որը, սակայն, միայն մասնակի հաջողությամբ պսակվեց։

Հիշյալ հեղինակները բացահայտեցին վաղ ֆեոդալիզմից զարգացած ֆեոդալիզմին անցնելու կոնկրետ ձևերը, զարգացած ֆեոդալիզմի հիմնական բնորոշ գծերը՝ խոշոր ժառանգական հողատիրության ամրապնդման պրոցեսի ավարտ, աշխարհիկ և եկեղեցական խոշոր կալվածատիրական տնտեսությունների ծագում ու զարգացում, արտադրողական ուժերի բուռն վերելք, աշխատանքի հասարակական բաժանման խորացում, քաղաքային կյանքի, առևտրի և արհեստների զարգացում, ապրանքային արտադրության, ապրանքա-դրամական շրջանառության, ներքին և արտաքին շուկաների ընդլայնում և որպես այս ամենի հետևանք՝ հիմնական նյութական բարիքներ արտադրողի՝ գյուղացիության սոցիալ-իրավական վիճակի վատթարացում և այլն[46]։

Ֆեոդալական հողատիրության ձևերի, ֆեոդալական ռենտայի և հարկային ինստիտուտների գյուղացիության շահագործման ձևերի ուսումնասիրության ուղղությամբ սովետահայ պատմագրության մեջ մեծ աշխատանք է կատարվել և ներկայումս էլ կատարվում է։ Վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի առումով այդ պրոբլեմները հանգամանորեն լուսաբանված են, ինչպես նշվեց, վերոհիշյալ ուսումնասիրողների աշխատություններում, իսկ ֆեոդալիզմի անկման շրջանի նույն հարցերը քննված են Թ. Ավդալբեգյանի, Բ. Հարությունյանի, Պ. Հարությունյանի, Ս. Պողոսյանի, Ս. Մարկոսյանի, Լ. Խաչիկյանի, Լ. Բաբայանի, Հ. Փափազյանի, Մ. Զուլալյանի և այլոց աշխատություններում[47]։

---

46 Տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957։ С. Еремян, Очерки истории СССР, ч. I—II, М., 1953: Ս. Պողոսյան, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում IX—XIII դդ., Երևան, 1958։ Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956։ Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. 1, Երևան, 1958, հատ. 2, 1964։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. I—II, Երևան, 1957, 1958։

47 Թ. Ավդալբեգյան, Բահրան և մյուլքը XVII և XVIII դարերում, «Սորք», գիրք 2, 1923։ Գլխահարկը Թյուրքիայում XVII—XVIII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1։ Б. Арутюнян, Крупные монастырские хозяйства в Армении XVII—XVIII вв., Ереван, 1940; П. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., М., 1954. Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում XVII—XVIII դարերում և Էջմիածինը որպես կալվածատեր, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատ. 13, 1940։ Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան նահանգում XVII—XVIII դդ. և XIX դ. առաջին քառորդում, Երևան, 1959։ Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա և Բ մասերի առաջաբանները։ Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դդ., Երևան, 1964։ К вопросу о закрепощении крестьян в Армении домонгольского периода, Ереван, 1961։ Ակնարկներ միջնադարյան Հայաստանի պատմության, Երևան, 1966։ Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, I մաս, 1956, II մաս, 1959։ Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966։

Երկար տարիներ սովետահայ պատմագրության մեջ բանավեճի առարկա է գյուղացիության ճորտացման ընթացքի պարբերացումը։ Այս հարցի ուսումնասիրությունն անցել է երկու փուլ։ Մինչև 50-ական թթ. գերիշխում էր այն տեսակետը, որի համաձայն վաղ ֆեոդալիզմի դարաշրջանից սկսած հայ գյուղացիությունը ոչ միայն անձնական կախման մեջ էր, այլև ամրացված էր հողին, այլ կերպ ասած՝ ճորտացված էր (Հ. Մանանդյան, Ս. Սամվելյան. Լեո և ուրիշներ)։ Հ. Մանանդյանը միաժամանակ նշում էր, որ գյուղացիության մի մասն ազատ էր[48]։

Իրավացիորեն քննադատելով այս տեսակետը, Թ. Ավդալբեգյանը, սակայն, ընկավ մի այլ ծայրահեղության մեջ. նա չտեսնում էր ժխտել նախարարական կազմակերպության ֆեոդալական բնույթը, հողը համարում էր պետության սեփականություն, իսկ տնտեսակարգը՝ ոչ թե ֆեոդալական, այլ «ասիական տնտեսություն», որտեղ անմիջական արտադրողների գերակշռող մասը ազատ գյուղացիությունն էր[49]։

Հայաստանում ֆեոդալիզմի զարգացման բնորոշ գծերը բացահայտելուց հետո սովետահայ պատմաբանները 50-ական թթ. սկզբներից սկսած տվեցին նաև ճորտատիրության ինստիտուտի զարգացման հաջորդական փուլերի պատկերը. նոր պարբերացման համաձայն Հայաստանում գյուղացիության ճորտացումը հիմնականում սկսվել է IX դարում, խորացել ու մասսայական բնույթ է ստացել XII—XIII դդ., սակայն չի հասել դասական ճորտատիրության մակարդակին։ Այս կարծիքին են նաև պատմաբաններ Աշ. Հովհաննիսյանը, Ս. Եյեմյանը, Ս. Պողոսյանը, Բ. Առաքելյանը, Լ. Բաբայանը և ուրիշներ։ Բ. Հարությունյանը և Ս. Հակոբյանը, չժխտելով հանդերձ գյուղացիության ճորտացման պրոցեսի առկայությունը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում, գրտնում են, որ գյուղացիության հիմնական մասը ճորտացված չէր։ Չնայած կատարվածին, այնուամենայնիվ, Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունն առայժմ անբավարար վիճակում է գտնվում։

Հայաստանի XIII—XIV դդ. սոցիալ-տնտեսական պատմության հարցերին է նվիրված Լ. Հ. Բաբայանի մենագրությունը[50]։ Հեղինակը ցույց է տալիս երկրի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը, որոնք արդյունք էին մոնղոլական նվաճման և ավելի հետամնաց տնտեսաձևի՝ «քոչվորական» ֆեոդալիզմի տիրապետության։

Հայաստանի XIII դ. սոցիալ-տնտեսական կյանքի մի շարք հարցերի լուսաբանմանն են նվիրված Հ. Ժամկոչյանի աշխատությունները[51]։

Կիլիկիայի հայկական թագավորության սոցիալ-տնտեսական պատմության խնդիրները լուսաբանված են Գ. Միքայելյանի մենագրության մեջ, ինչպես և Ս. Բորնազյանի հոդվածներում[52]։

---

48 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 28, 171։

49 Թ. Ավդալբեգյան, Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան. Երևան, 1926։

50 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964։

51 Հ. Ժամկոչյան, Դիտողություններ Ֆրիկի և նրա տագերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1։ Անի քաղաքի XIII դարի երկու արձանագրությունների մասին, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», 1955, № 47։

52 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

XV—XVIII դդ. սոցիալ-տնտեսական կյանքի առանձին հարցեր (գյուղական համայնքի, աշխարհիկ և հոգևոր հողատիրության ձևերի, ֆեոդալական ռենտայի, հարկային ինստիտուտների) քննարկված են Թ. Ավդալբեգյանի, Ս. Պողոսյանի, Բ. Հարությունյանի, Պ. Հարությունյանի, Ս. Մարկոսյանի, Լ. Խաչիկյանի, Հ. Փափազյանի, Մ. Ջուլալյանի աշխատություններում և հոդվածներում։ Ամբողջությամբ վերցված, սակայն, այս ժամանակաշրջանը դեռևս բոլորովին անբավարար է ուսումնասիրված։

Հայաստանի տնտեսական կյանքի պատմությունը (հնագույն շրջանից սկսած մինչև XVIII դ. վերջը) ընդհանուր գծերով և խիստ համառոտ շարադրված է Հ. Թումանյանի աշխատության մեջ[53]։

Հայաստանի (գերազանցապես՝ Արևելյան) XVI—XVIII դդ. ֆեոդալական հարաբերությունների պատմությունը լուսաբանել է նաև Ի. Պ. Պետրուշևսկին[54]։

Մեծ աշխատանք է տարվում ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի քաղաքների և քաղաքային կյանքի, առևտրի և արհեստների ուսումնասիրության գծով։ Այս կարևոր խնդրի ուսումնասիրությունը սկիզբ է դրել, ինչպես նշվեց, Հ. Մանանդյանը։ Նրա աշխատություններում հանգամանորեն քննվում են հին և միջնադարյան Հայաստանի առևտրի և քաղաքների առաջացումն ու զարգացման փուլերը, առևտրական ճանապարհներն ու նրանց դերը[55]։

Միջնադարյան Հայաստանի քաղաքների և նրանցում տեղի ունեցած սոցիալական պայքարի լուսաբանման և բնութագրման գործում մեծ ծառայություններ ունեն Ն. Յա. Մառը և Հ. Ա. Օրբելին։ «Անի»[56] աշխատության մեջ Ն. Յա. Մառը խոր և բազմակողմանիորեն բացահայտում է Անի քաղաքի սոցիալ-տնտեսական կյանքը, նրա մշակույթն ու կենցաղը, Հ. Ա. Օրբելին տվել է մի շարք փայլուն գործեր միջնադարյան Հայաստանի նյութական մշակույթի, հայկական միջնադարյան առակների, «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրության ասպարեզում, որոնք խոշոր ներդրում են սովետահայ պատմագրության մեջ։ Միջնադարյան Հայաստանի պատմությունն ու մշակույթը և մասնավորապես քաղաքային կյանքը Հ. Օրբելին քննարկում է Առաջավոր Ասիայի պատմության ու մշակույթի լայն ֆոնի վրա և նրա հետ սերտորեն կապված[57]։

Վաղ միջնադարյան Հայաստանում, ինչպես նաև արաբական տիրապետության ու Բագրատունյաց թագավորության շրջաններում քաղաքների ծագ-

---

Ս. Բորնազյան, Հայ ասպետությունը Կիլիկյան հայկական պետությունում XII—XIV դդ., Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1963, № 5։ Խաչակիր օրդեններին և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առնչությունների պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3 և ուրիշներ։

53 Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմությունը, Երևան, 1960։

54 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв., Л., 1949.

55 О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930, издание второе, переработанное и дополненное, 1954. Հայաստանի քաղաքները X—XI դդ., Երևան, 1940։

56 Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.—М., 1934.

57 И. А. Орбели, Армянский героический эпос, Ереван, 1956. Басни средневековой Армении, М.—Л., 1956. Избранные труды, т. I, Ереван, 1963 и др.

ման և զարգացման հետ կապված մի շարք հարցեր ուսումնասիրված են Հ. Զորյանի կողմից[58]։

Միջնադարյան Հայաստանի առանձին քաղաքների պատմության ուսումնասիրությանն են նվիրված Ե. Շահազիզի, Ա. Շահնազարյանի, Կ. Ղաֆադարյանի գործերը[59]։

Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում քաղաքների ծագման, նրանց ֆեոդալական բնույթի, նրանցում կատարված որակական փոփոխությունների, ապրանքային արտադրության, առևտրի ու արհեստների զարգացման, քաղաքների սոցիալական կառուցվածքի, արհեստավորների համքարությունների, բաղաքային վարչության և ինքնավարության ծագման, սոցիալական հակասությունների և դասակարգային պայքարի սրման, քաղաքների անկման հարցերը և մի շարք այլ հարցեր հանգամանորեն լուսաբանված են Բ. Ն. Առաքելյանի երկհատոր մենագրության մեջ[60]։ Հեղինակը հիմնավորում է միջնադարյան Հայաստանի քաղաքների ֆեոդալական ծագումն ու բնույթը, ցույց է տալիս, որ դրանք երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունք էին։

Ֆեոդալական Հայաստանի արհեստների և համքարությունների պատմության ուսումնասիրության գծով զգալի աշխատանք է կատարել Վ. Աբրահամյանը[61]։

* *

Հայ ժողովրդի պատմության ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքական պատմության ուսումնասիրության սկիզբը ևս դրել է հայ նոր պատմագրության հիմնադիր Մ. Չամչյանը XVIII դ. վերջին տասնամյակներում[62]։

Չամչյանից մոտավորապես մեկ և կես դար հետո այդ դժվարին աշխատանքը շարունակեցին պատմաբաններ Լեոն (Ա. Բաբախանյան) և Հ. Մանանդյանը։ Լեոն տվել է Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքական պատմության գունեղ, ջերմ հայրենասիրական ոգով շարադրանքը (բացառյալ XII—XV դդ.)։ 20-ական թթ. ավարտված նրա այդ աշխատությունները հրատարակվեցին 40-ական թթ. միայն[63]։

---

58 Հ. Զորյան, Արտաշատ, Վաղարշապատ և Դվին պրոբլեմը, ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, 1935, հատ. 1։ Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի բաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1927—1928, № 2—3։

59 Ե. Ա. Շահազիզ, Հին Երևանը. Երևան, 1931, А. Шахназарян, Двин, историко-географический очерк, Ереван. 1940, Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։

60 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. 1, Երևան, 1958, հատ. 2, Երևան, 1964։ Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2։ Ապրանքային արտադրության և արհեստագործական տեխնիկայի զարգացումը Հայաստանում IX—XIII դարերում, նույն տեղում, 1959. № 2—3։

61 Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956։ Արհեստները և համքարային կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1946։

62 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, հատ. Գ, Վենետիկ, 1786։

63 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1947, հատ. 3, Երևան, 1946։

Սակայն բուրժուական պատմագրության դիրքերում կանգնած լինելով, Լեոն անտեսում էր սոցիալ-տնտեսական հարաբերությունները, չէր տեսնում ժողովրդական մասսաների դերը, դասակարգերն ու դասակարգային պայքարը, գերագնահատում էր անհատի, եկեղեցու և կրոնական գաղափարախոսության դերը պատմության մեջ, մոդեռնացնում էր սոցիալական շարժումների պատմությունը։

Սելջուկների տիրապետության (XI—XII դդ.), Զաքարյանների ինքնուրույն ֆեոդալական իշխանության (XII—XIII դդ.), մոնղոլական և թուրքական տիրապետության (XIII—XV դդ.) չհետազոտված և բարդ պատմությունն առաջինը ուսումնասիրել է Հ. Մանանդյանը[64]։ Նրա աշխատության մեջ նորովի լուսաբանված են բազմաթիվ պատմական փաստեր։ Ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքական պատմությունը քննարկվում է Առաջավոր Ասիայի և Արևմուտքի երկրների պատմության ընդհանուր ֆոնի վրա։ Հ. Մանանդյանի աշխատությունները հարուստ են գիտական ընդհանրացումներով, որոնք արվում են հսկայական փաստական նյութի հիման վրա։ Իրենց նշանակությամբ նրա աշխատությունները դուրս են գալիս ազգային պատմության շրջանակներից և մեծ արժեք են ներկայացնում հին աշխարհի, Առաջավոր Ասիայի երկրների և հատկապես Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրման համար։ Հ. Մանանդյանի առաջադեմ գիտական աշխարհայացքը նպաստում էր գիտա-հետազոտական աշխատանքում լուրջ հաջողությունների հասնելուն։

Սակայն քաղաքական պատմությունը լուսաբանելիս Հ. Մանանդյանը անհրաժեշտ ուշադրություն չի նվիրել սոցիալ-տնտեսական և ներդասակարգային ու միջդասակարգային բարդ փոխհարաբերություններին, աշխատավոր ժողովրդի դերին, նրա դասակարգային պայքարին և այլն։

1930-ական թթ. կեսերից Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքական պատմության ուսումնասիրության գործում նոր փուլ է սկսվում։ Մարքս-լենինյան պատմության նվաճումները և պատմական մատերիալիզմի սկզբունքների վերջնական հաղթանակը, ինչպես նաև հայ բուրժուական պատմագրության ազգեցության հաղթահարման համար տարվող պայքարի ուժեղացումը Հայաստանում նախադրյալներ են ստեղծում հայ ժողովրդի դարավոր պատմությունը մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից ուսումնասիրելու և լուսաբանելու, նրա մարքսիստական պարբերացումը մշակելու համար։

Երևան են գալիս սովետահայ պատմաբանների նոր ուսումնասիրություններ՝ նվիրված ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքական պատմությանը։ Լայնորեն ծավալված գիտական հետազոտությունների առաջին արդյունքները հրապարակվում են բուհական և դպրոցական ձեռնարկներում ու դասագրքերում[65]։

---

64 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952։

65 История СССР. М., 1939. Հայոց պատմության բաժինների հեղինակներն են Ս. Տ. Երեմյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Մ. Ս. Հասրաթյանը, Պ. Հարությունյանը։ «Հայ ժողովրդի պատմություն», ձեռնարկ միջնակարգ դպրոցների համար, 1943։ Հեղինակներ՝ Բ. Մ. Հարությունյան, Խ. Ս. Սամուելյան, Հ. Հ. Հարությունյան, Ս. Պ. Պողոսյան, խմբագիրներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Կ. Գ. Ղաֆադարյան։

Չնայած մեթոդոլոգիական և փաստական բնույթի սխալներին, այդ աշխատությունները որպես առաջին փորձեր կարևոր իրադարձություն էին սովետահայ պատմագրության մեջ։

1940—1950-ական թթ. ընթացքում լուրջ աշխատանք է կատարվում Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքական պատմության ուսումնասիրության գծով[66]։ Ս. Երեմյանը մշակում է ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պիտական պարբերացումը և դրա հիման վրա տալիս Հայաստանի III—XVII դդ. պատմության համառոտ շարադրանքը։ Այդ պարբերացման համաձայն վաղ ֆեոդալիզմի դարաշրջանն ընդգրկում է III—VIII դարերը, զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը՝ IX—XIII դդ., ֆեոդալիզմի անկման և վերացման դարաշրջանը՝ XIII—XIX դդ. (70-ական թթ.)[67]։

Միջնադարի հայ ազատագրական մտքի պատմությանը նվիրված իր երկհատոր աշխատության մեջ Ա. Գ. Հովհաննիսյանը լուսաբանում է նաև քաղաքական պատմության հարցերը։ Նա վերլուծում է դրա հիմքում ընկած սոցիալ-քաղաքական և տնտեսական շարժառիթներն ու ազդակները, բացահայտում է Արևելքի և Արևմուտքի նկատմամբ Հայաստանի իշխող դասակարգի ունեցած քաղաքական կողմնորոշման էությունը, այդ հողի վրա ծագած ներքին հակամարտությունները և դավանաբանական պայքարը[68]։

Արշակունյաց հարստության, արաբական տիրապետության ու Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանների քաղաքական պատմությունն ընդհանուր գծերով շարադրված է Հ. Հարությունյանի աշխատություններում[69]։ Արաբական տիրապետության հետ կապված առանձին հարցեր քննարկված են Հ. Նալբանդյանի, Ս. Մելիք-Բախշյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի աշխատություններում, բյուզանդական տիրապետության որոշ հարցեր՝ Հ. Բարթիկյանի աշխատություններում[70]։ Հայաստանի մի մասի՝ Սյունիքի IX—X դդ. պատմության լուսաբանմանն է նվիրված Հ. Ութմազյանի ուսումնասիրությունը[71]։

Հայաստանի պատմության ամենից ուսումնասիրված ժամանակաշրջաններից մեկի՝ Զաքարյանների ինքնուրույն ֆեոդալական իշխանության և մոնղոլական տիրապետության քաղաքական պատմության հարցերը քննարկվում են Լ. Բաբայանի աշխատության մեջ[72]։

---

66 Տե՛ս «Вопросы истории», 1951, № 7.

67 Տե՛ս Очерки истории СССР, ч. I—II. М., 1953.

68 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության-հատ. Ա, Երևան, 1957, հատ. Բ, Երևան, 1959։

69 Հ. Հարությունյան, Հայաստանը Արշակունիների շրջանում, Երևան, 1940։ Հայաստանը Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում. Երևան, 1946։ Նույնի՝ Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959։

70 А. Налбандян, Административная и налоговая политика арабов в Армении (автореферат канд. диссертации), Ереван, 1950. Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյանների շարժումը Հայաստանում, Երևան, 1955։ Ա. Ն. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։ Г. М. Бартикян, Источники изучения павликианского движения, Ереван, 1961.

71 Հ. Ութմազյան, Սյունիքը IX—X դդ., Երևան, 1958։

72 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դդ., Երևան, 1964։

Հ. Մանանդյանից հետո XV դարի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության լուսաբանման առաջին փորձը կատարել է Լ. Խաչիկյանը[73]։ Վերջին տարիներին գիտական ամսագրերում հրատարակվել են Հ. Փափազյանի և Մ. Զուլալյանի առանձին ուսումնասիրություններն ու հոդվածները՝ նվիրված XVI—XVII դդ. քաղաքական պատմության հարցերին։ Հայ ժողովրդի այս ժամանակաշրջանի ազատագրական պայքարի հետ կապված քաղաքական պատմության որոշ հարցեր լուսաբանված են Լեոյի[74], Պ. Հարությունյանի, Ա. Միրզոյանի և այլոց աշխատություններում[75]։

Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը, հայ ժողովրդի պատմության այդ կարևոր բաղկացուցիչ մասը ուսումնասիրված է Տ. Միքայելյանի մենագրության մեջ[76]։ Հեղինակը հանգամանորեն շարադրում է Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական պատմությունը, նրա ստեղծման և անկման սոցիալ-քաղաքական և տնտեսական պատճառները, ցույց է տալիս Արևելքի և Արևմուտքի հարաբերությունների գործում այդ պետության ունեցած դերը և այլն։ Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական պատմության մի շարք հարցեր քննության են ենթարկվել Ա. Գալստյանի գործերում[77] (Սմբատ Սպարապետի գործունեությունը, հայ-մոնղոլական դիվանագիտությունը) և Ս. Բորնազյանի հոդվածներում։

Մինչև վերջին ժամանակներս սովետահայ պատմագրության մեջ անհրաժեշտ ուշադրության չի առնվել հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասի՝ հայ գաղթավայրերի հարուստ պատմության ուսումնասիրումը։ Հայ ժողովուրդը դարեր շարունակ ենթարկվելով օտար նվաճողներից, որոնք ոտնահարում էին նրա ազատությունը, արժանապատվությունը, կորստյան մատնում ժողովրդին, ստիպված է եղել թողնել հայրենիքը և բնակություն հաստատել աշխարհի տարբեր երկրներում։ Այս ճանապարհով, XI դ. սկսած, Հայաստանի սահմաններից դուրս ստեղծվել են հայկական գաղթավայրեր։ Այդ գաղթավայրերից շատերում հայերը շարունակում էին ապրել ու զարգանալ, պահպանելով իրենց ազգային ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները։ Որոշ գաղթավայրեր հետագայում դարձան հայ մշակույթի և գրականության խոշոր կենտրոններ և մեծ դեր խաղացին հայ ժողովրդի պատմական ու մշակութային ավանդույթների պահպանման և զարգացման գործում՝ բուն Հայաստանում տիրող ծանր դրության և դեգրադացիայի պայմաններում։

Հայ գաղթավայրերի ուսումնասիրության առաջին փորձը սովետահայ պատմագրության մեջ կատարել է Ս. Տեր-Ավետիսյանը 30-ական թթ. վերջերին, Իրանի և Հնդկաստանի հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված իր

---

73 Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ա մաս, Երևան, 1955, Բ մաս, Երևան, 1958, Առաջարաններ։

74 Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934։

75 П. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., М., 1964. Ա. Միրզոյան, Հայ ազատագրական շարժումը Սյունիքում (1722—1730 թթ.), Երևան, 1950։ Հ. Նաջարյան, Թուրք-պարսկական պատերազմս XVII դ. սկզբին և հայերի գաղթեցումը, Երևան, 1959։ Թուրք-պարսկական հարաբերությունները XVI դարում և XVII դարի առաջին կեսում և Հայաստանը, Երևան, 1961։

76 Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

77 Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961։ Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945։ Հայ-մոնղոլական առաջին հարաբերությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1։ Ս. Բորնազյանի նշված հոդվածները։

գործերում[78]։ Դրանից գրեթե երկու և կես տասնամյակ հետո միայն աշխուժանում է գիտա-հետազոտական աշխատանքն այդ կարևոր ասպարեզում։ Վերջերս լույս է տեսել Ա. Աբրահամյանի երկհատոր աշխատության առաջին հատորը՝ այդ հարցին նվիրված առաջին ամբողջական գիտական գործը[79]։ Արևելյան Եվրոպայի ամենախոշոր հայ գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի հայ բնակչության իրավական, սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության վերաբերյալ ուշագրավ նյութեր են հրապարակված Վ. Գրիգորյանի աշխատության մեջ։ 1964 թ. հրատարակվել է Վ. Միքայելյանի աշխատությունը՝ նվիրված Ղրիմի հայ գաղութի պատմությանը[80]։ Հրատարակության են պատրաստվում մի շարք նոր մենագրություններ։

Մինչև այժմ սովետահայ պատմագրության մեջ խիստ անբավարար ուշադրության է արժանացել այնպիսի մի կարևոր խնդիր, ինչպիսին է հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ ֆեոդալիզմի դարաշրջանում։

Համեմատաբար հանգամանորեն է ուսումնասիրված V դ. պարսից տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմությունը (Լեո, Հ. Հարությունյան, Ս. Երեմյան)[81]։

Արաբական լծի դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը սեղմ և ընդհանուր գծերով ներկայացված է Լեոյի և Հ. Մանանդյանի աշխատություններում[82]։

Թուրքական լծի դեմ արևմտահայերի մղած ազատագրական պայքարի գրեթե չուսումնասիրված պատմությանն է նվիրված Հ. Ս. Անասյանի մենագրությունը, որը գրված է հիմնականում օտար աղբյուրների հիման վրա[83]։

Իր «Դրվագներում» Աշ. Հովհաննիսյանը հանգամանալից վերլուծության է ենթարկել հայ ազատագրական մտքի ծագման ու զարգացման, նրա սոցիալական միջավայրի հարցերը, բացահայտել սոցիալական տարբեր խավերի վերաբերմունքը ազատագրական շարժման խնդիրների և հեռանկարների նկատմամբ։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը լուսաբանվում

---

78 С. Тер-Аветисян, Город Джуга, Тбилиси, 1937. Материалы по истории армянской колонии в Индии, տե՛ս Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատ. 13, 1940։

79 Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագծեր հայ գաղթավայրերի պատմության, Ա, Երևան, 1964։

80 Վ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963։ Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964։ Գիտական պարբերականներում լույս են տեսել Լ. Խաչիկյանի, Վ. Գրիգորյանի, Վ. Ոսկանյանի, Վ. Հակոբյանի, Ս. Քոլանջյանի, Ֆ. Պողոսյանի, Ժ. Անանյանի, Վ. Խաչատրյանի, Ա. Յուխտի հոդվածները՝ նվիրված հայ գաղթավայրերի պատմության առանձին հարցերին։

81 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2։ Հ. Հարությունյան, Վարդանանց պատերազմը, Երևան, 1947։ Հայկական ազատագրական պատերազմները պարսկական տիրապետության դեմ V դ., Երևան, 1958։ Ավարայրի ճակատամարտը և հայկական ազատագրական պատերազմները պարսկական գերիշխանության դեմ V դ., Երևան, 1962։ С. Еремян, Народно-освободительная война армян против персов, см. «Вестник древней истории», № 1, 1951.

82 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1947։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Բ, Երևան, 1960։

83 Հ. Ս. Անասյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում XVII դ., Երևան, 1961։

Լ. Անդրկովկասի մյուս ժողովուրդների պայքարի հետ սերտորեն առնչված։ Հեղինակը բացահայտում է ժողովրդական մասսաների դերը այդ պայքարում, ցույց տալիս, որ պայքարի հիմնական շարժիչ ուժը գյուղացիությունն էր և այլն։

Զգալի աշխատանք է տարվել ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի սոցիալական շարժումների և գյուղացիական ապստամբությունների պատմության ուսումնասիրման ասպարեզում։ Հ. Զորյանը, Ի. Ջավախիշվիլին, Ս. Երեմյանը, Ս. Պողոսյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ս. Մելիք-Բախշյանը, Հ. Բարթիկյանը և այլ պատմաբաններ[84], հերքելով հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմագրության հակագիտական այն տեսությունը, թե միջնադարյան աղանդավորական շարժումները զուտ կրոնական բնույթ էին կրում, բացահայտեցին այդ շարժումների սոցիալ-տնտեսական ակունքներն ու դասակարգային էությունը, ցույց տվեցին, որ այդ շարժումներն ուղղված էին ոչ միայն եկեղեցու, այլև տիրող ֆեոդալական կարգերի դեմ, որ դրանց հիմնական շարժիչ ուժն էին ժողովրդական մասսաները, որոնց միջից էլ դուրս էին եկել այդ շարժումների առաջնորդները։ Համեմատաբար ավելի հանգամանորեն է լուսաբանված թոնդրակեցիների շարժումը՝ գաղափարախոսությունը, նպատակները, հետևանքները։

* * *

Անցած տասնամյակների ընթացքում սովետահայ պատմագրությունն զբաղվել է նաև ֆեոդալական Հայաստանի մշակույթի, գիտության ու արվեստի պատմության հարցերի ուսումնասիրությամբ։ Բազմաթիվ արժեքավոր աշխատություններ են նվիրված գրականության, լեզվի, գիտության տարբեր ճյուղերի, փիլիսոփայության, իրավունքի, թատրոնի, ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության պատմությանը։ Աշխատություններում բաց-

84 Հ. Զորյան, Գյուղացիական ապստամբությունները ֆեոդալական Հայաստանում X դարում, Երևան, 1929։ А. Абраамян, Крестьянское движение в Сисакане в X в., «Исторический журнал», 1938, № 3։ Լ. Մելիքսեթ-Բեկ, Զորրորդ Հայքի 774—775 թթ. գյուղացիական ապստամբության հարցի շուրջը, ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 2։ Ի. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, Երևան, 1937։ Б. Арутюнян, Крестьянские волнения в Сюнике в X в., «Ученые записки» рус. пед. института, 1950, т. III։ Հ. Հարությունյան, նշվ. աշխատությունները և Գյուղացիական շարժումները Հայաստանում XVII դարի առաջին քառորդում, 1939։ Ս. Երեմյան, նշվ. աշխատությունները։ Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխատությունը և «Движение тондракитов в Армении 9—11 вв.», տես «ВИ», 1956, № 10, Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակը ու ժամանակակիցները, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3։ Ս. Պողոսյան, Ս. Հակոբյան, Բ. Առաքելյան, Լ. Բարայան, Հ. Ութմազյան, Ս. Մելիք-Բախշյան, Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխատությունները։ Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, 1951։ Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում XII—XIV դարերում։ Վ. Համազասպյան, Թոնդրակեցիների շարժման գաղափարախոսությունը, «Տեղեկագիր», 1949, № 3։ Աս. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, «Տեղեկագիր», 1954, № 3։ Տ. Սահակյան, Գյուղացիական ապստամբությունը Սյունիքում X դարում, «Տեղեկագիր», 1956, № 3։ Հ. Բարթիկյան, նշվ. աշխատությունը և К вопросу о павликианском движении в первой половине VIII в., «Византийский временник», т. VIII. К. Юзбашян, Тондракитское движение в Армении и павликиане, «Տեղեկագիր», 1956, № 9։

85 Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928. Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար.

հայտված են այդ ասպարեզներում հայ ժողովրդի ձեռք բերած մեծ նվաճումները, որոնք արժանավոր տեղ են գրավում համաշխարհային մշակույթի, գիտության և արվեստի զարգացման գործում։

Սովետահայ պատմաբանների շատ աշխատություններում լուսաբանվում են ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի հարևան և այս կամ այն չափով նրա պատմության հետ առնչվող այլ երկրների քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կապերն ու փոխհարաբերությունները։ Հ. Մանանդյանի, Լեոյի, Աշ. Հովհաննիսյանի, Ս. Երեմյանի, Հ. Անասյանի և ուրիշների ուսումնասիրություններում վեր են հանված այդ կապերն ու փոխհարաբերությունները Վրաստանի, Աղվանքի, Պարսկաստանի, Թուրքիայի, Հունաստանի, Հռոմի, Բյուզանդիայի, արաբական խալիֆաթի երկրների, Ռուսաստանի և այլ երկրների հետ։

* *

Հայ պատմաբանները դգալի աշխատանք են կատարել դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար դասագրքեր ստեղծելու ուղղությամբ։ 1943 թ. հրատարակվում է միջնակարգ դպրոցի ուսումնական ձեռնարկի I մասը[86]։ 1951 թ. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը հրատարակեց ուսումնական նոր ձեռնարկի առաջին մասը, որն ընդգրկում էր հնագույն դարերից մինչև XVIII դարն ընկած ժամանակաշրջանը[87]։ Այդ նույն ժամանակ լույս տեսավ Ս. Տ. Երեմյանի Հայաստանի պատմական ատլասի առաջին հրատարակությունը։ Բարձրագույն դպրոցի համար հայ ժողովրդի պատմության ուսումնական ձեռնարկ ստեղծելու նախաձեռնությունը պատկանում է Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնին։ 1958—1961 թթ. ընթացքում լույս տեսավ յոթ պրակ։ Դրանցից հինգը[88] ընդգրկում են

Երևան, 1962։ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 1, Երևան, 1944, հատ. 2, 1946։ Գ. Լևոնյան, Թատրոնը հին Հայաստանում, Երևան, 1941։ Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. I, 1959, հ. II, 1964։ Г. Гоян, 2000 лет армянского театра, т. 2. Театр средневековой Армении, М., 1952. Կ. Ղաֆադարյան, Հայ գրերի նախնական ձևերը, Երևան, 1939։ Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940։ Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959։ Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 1, 2, 3, Երևան, 1956—1958։ В. Чалоян, История армянской философии, Ереван, 1959. Л. Оганесян, История медицины в Армении с древнейших времен до наших дней, ч. 1—5, Ереван, 1946—47.

86 «Հայ ժողովրդի պատմություն», ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար, I մաս, հեղինակներ՝ Բ. Մ. Հարությունյան, Խ. Ս. Սամուելյան, Հ. Հ. Հարությունյան, Ս. Պ. Պողոսյան, խմբագիրներ՝ Մ. Ռ. Ներսիսյան, Կ. Ռ. Ղաֆադարյան։

87 «Հայ ժողովրդի պատմություն», I մաս (հայերեն և ռուսերեն), հեղինակներ՝ Բ. Բ. Պիոտրովսկի, Բ. Ն. Առաքելյան, Մ. Ս. Հասրաթյան, Ս. Տ. Երեմյան, Գ. Գ. Միքայելյան, Ա. Ռ. Հովհաննիսյան։ Խմբագիրներ՝ Բ. Ն. Առաքելյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Երևան, 1951, II հրատարակություն, Երևան, 1956, խմբագիրներ՝ Ս. Տ. Երեմյան, Բ. Ն. Առաքելյան, Մ. Ս. Հասրաթյան։

88 Հ. Գ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան համայնական հասարակարգի և ստրկատիրության էպոխայում, պրակ 1, 1961։ Ա. Գ. Արրահամյան, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանում, պրակ 2, 1959։ Ս. Մելիք-Բախշյան, Հայաստանը VII—IX դդ., պրակ 3, 1958։ Ս. Պ. Պողոսյան, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում IX—XIII դդ., պրակ 4, 1958։ Հայաստանը XIII—XVII դդ., պրակ 5, 1960։

պատմությունը մինչև XVIII դարը։ Նույն ամբիոնի ջանքերով լույս տեսան հայ ժողովրդի պատմության բուհական դասընթացի առաջին և երկրորդ հատորները[89]։

Մի շարք հայ պատմաբաններ (Ս. Երեմյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Մ. Հասրաթյան, Պ. Հարությունյան) ակտիվորեն մասնակցեցին «ՍՍՌՄ պատմություն» (1—4 մասեր) (1939 թ.) և «Ակնարկներ ՍՍՌՄ պատմության» (1953—1958) գրքերի առանձին հատորների ստեղծմանը։ Վերջին հրատարակության մեջ Ս. Տ. Երեմյանի գրչին է պատկանում Հայաստանի III—XVII դդ. պատմությունն, ինչպես նաև Աղվանքի և մասամբ Վրաստանի պատմության շարադրանքը։

3. Պատմական օժանդակ գիտություններ

Հին և միջնադարյան Հայաստանի պատմության նյութերը հիմնականում կազմում են աղբյուրների երկու խումբ՝ վիմագրական և պատմագրական։ Հայաստանի պատմության հնագույն շրջանի համար առաջնակարգ նշանակություն ունեն օտարալեզու վիմագրական աղբյուրները։ Սրանց ուսումնասիրությունը հիմնականում սովետական պատմագրության արժանիքն է։ Ուսումնասիրողների ուշադրությունն ուղղված էր գլխավորապես դեպի հունարեն և արամեերեն արձանագրությունները՝ Արմավիրի հունարեն արձանագրությունը[90], Գառնիի հունարեն արձանագրությունը[91], Սևանա լճի ափին գտնված արամեերեն նույնատիպ արձանագրությունները, որոնցից մի քանի նմուշ է գտնվել[92], Գառնիում և Սիսիանում գտնված արամեական արձանագրությունները[93]։

Կ. Վ. Տրեվերը կազմել է հին Հայաստանի պատմությանը վերաբերող օտարալեզու արձանագրությունների առաջին ժողովածուն[94]։

Հայաստանում մեծ աշխատանք է կատարված նաև հայ միջնադարյան վիմագրության ուսումնասիրության ուղղությամբ։ Հայ միջնադարյան վիմական արձանագրությունների թիվը անցնում է 10 հազարից։ Նրանք բազմազան են իրենց բովանդակությամբ և ընդգրկում են հասարակական, տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի տարբեր բնագավառները, անգնահատելի նյութ հայթայթելով ուսումնասիրողին։

---

89 Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, հեղինակներ՝ Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Երևան, 1964, հատ. II, հեղինակ՝ Ս. Պողոսյան, Երևան, 1965։

90 А. И. Болтунова, Греческие надписи Армавира, „ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի տեղեկագիր", 1942, № 1—2։ Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946։ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 104 և հաջ.։

91 Այս արձանագրությանն են նվիրված Ս. Լիսիցյանի, Հ. Մանանդյանի, Ա. Աբրահամյանի, Կ. Վ. Տրեվերի, Բ. Առաքելյանի, Գ. Սարգսյանի, Լ. Ռոբերի, Լ. Ելնիցկու, Հ. Բարթիկյանի, Ս. Կրկյաշարյանի աշխատությունները։

92 А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1945, № 2; И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1955, № 2; Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի նորագյուտ արամեական արձանագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10։

93 А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3; Арамейская надпись из Зангезура, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4.

94 К. В. Тревер, նշվ. աշխ.։

Հայաստանի գիտնականները պլանաչափորեն իրականացնում են այդ արձանագրությունների հավաքումը, ուսումնասիրությունն ու հրապարակումը։ Այդ աշխատանքները գլխավորում են հմուտ վիմագրագետներ Կ. Ղաֆադարյանը և Ս. Բարխուդարյանը։ Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը ձեռնարկել է «Դիվան հայ վիմագրության» շարքի հրատարակությունը։ Առաջին և երկրորդ պրակներն արդեն հրատարակված են, իսկ մի քանի պրակներ պատրաստ են տպագրության[95]։

Կ. Ղաֆադարյանը հրատարակել է առանձին վանքերի արձանագրությունները և գրել այդ վանքերի պատմությունը[96]։ Վիմական արձանագրությունների ուսումնասիրության շնորհիվ Ս. Բարխուդարյանը պարզել է միջնադարի բազմաթիվ հայ ճարտարապետների և քարգործ վարպետների անունները և բնութագրել նրանց գործունեությունը[97]։

Անցյալի հայ պատմագրության լավագույն ավանդները շարունակելով, սովետահայ պատմագրությունը որոշակի աշխատանք է կատարել հին և միջնադարյան Հայաստանի պատմության աղբյուրների մի այլ կարևորագույն խմբի՝ միջնադարյան հայ պատմիչների գործերի հրատարակման ուղղությամբ։ Նալմված և հրատարակված են այդ գործերից մի քանիսի քննական բնագրերը, լույս են տեսել աշխարհաբար, ռուսերեն թարգմանությունները։ Բոլոր այդ հրատարակություններն ունեն հանգամանալից առաջաբաններ և ընդարձակ ծանոթագրություններ[98]։

---

95 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Անի քաղաքը, կազմեց՝ Հ. Ա. Օրբելի, Երևան, 1965, պրակ 2, Գորիս, Սիսիան, Ղափան, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960։

96 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, 1948։ Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957։ Հաղբատ։ Ճարտարապետական կառույցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963։

97 Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963։

98 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938։ Նաև ռուսերեն՝ Дневник Закария Агулисского, Ереван, 1939. Ա բ ր ա հ ա մ Ե ր և ա ն ց ի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938։ Նաև ռուսերեն՝ Абраам Ереванци, История войн (1721—1736), Ереван, 1939։ Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939 (կազմող՝ Ստ. Մալխասյանց)։ Նաև ռուսերեն՝ История епископа Себеоса, Ереван, 1939 (перевод Ст. Малхасянца). Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, երկր. հրատ., Երևան, 1961։ Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1949 (կազմող՝ Ա. Աբրահամյան)։ Անանուն ժամանակագրություն, Երևան, 1940 (կազմողներ՝ Օ. Մամիկոնյան և Ա. Աբրահամյան)։ Կ ո ր յ ո ւ ն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, գրաբար տեքստ և աշխարհաբար թարգմանություն (աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի)։ Корюн, Житие Маштоца, Ереван, 1962 (перевод Ш. В. Смбатяна и К. А. Мелик-Оганджаняна). Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941 (կազմող՝ Ա. Աբրահամյան)։ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրությունը, Երևան, 1942 (կազմող՝ Ա. Աբրահամյան)։ Ե ղ ի շ ե, Վարդանանց պատմությունը, Երևան, 1946 (աշխարհաբար թարգմանություն՝ Ե. Տեր-Մինասյանի), երկր. հրատ., Երևան, 1958։ Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957 (կազմող՝ Ե. Տեր-Մինասյան)։ Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, Երևան, 1947 (աշխարհաբար թարգմանություն՝ Ստ. Մալխասյանցի)։ История Армении Фавстоса Бузанда, Ереван, 1953 (перевод М. Геворкяна). Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն հայոց, Երևան, 1961 (կազմող՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյան)։ Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, Պատմություն, Երևան, 1963 (կազմող՝ Կ. Յուզբաշյան)։ Армянский судебник Мхитара Гоша, Ереван, 1954 (перевод А. Паповяна). С м б а т С п а р а п е т, Судебник, Ереван, 1958 (перевод А. Галстяна). С и м е о н Е р е в а н ц и, Джамбр, Москва, 1958 (перевод С. Малхасянца).

Սովետահայ պատմագրության էական նվաճումներից մեկն է հայկական ձեռագրերի հիշատակարանների և միջնադարյան մանր ժամանակագրությունների բնագրերի հավաքումն ու քննական հրատարակությունը, որ կատարել են Լ. Խաչիկյանը և Վ. Հակոբյանը[99]։ Այս աղբյուրները հարուստ և արժեքավոր նյութ են պարունակում միջնադարյան Հայաստանի պատմության վերաբերյալ։

Աղբյուրագիտության բնագավառի նշանակալից երևույթ էր Վ. Հակոբյանի աշխատասիրած «Կանոնագիրք հայոց» գրքի հրատարակությունը։ Այն միջնադարի պատմության կարևոր սկզբնաղբյուր է[100]։

Որոշ աշխատանք է կատարվել նաև հին և միջնադարյան Հայաստանի պատմության օտար աղբյուրների հայերեն թարգմանության և հրատարակման ուղղությամբ։ Երևանի համալսարանում սկիզբ դրվեց «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարի հրատարակությանը[101]։ Այժմ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան հիմնադրել է «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարը[102]։

Միջնադարյան Հայաստանի և հայերի մասին վրացերեն աղբյուրների հայերեն թարգմանության և գիտական հրատարակման ասպարեզում մեծ ծառայություններ ունի Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը[103]։ Օտար աղբյուրների թարգմանության կարևոր գործում իրենց ավանդն են ներդրել Հ. Աճառյանը, Հովհ. Հակոբյանը, Ա. Սաֆրաստյանը, Հ. Փափազյանը, Հ. Բարթիկյանը, Մ. Զուլալյանը[104]։

Որոշ աշխատանք է կատարված այլ երկրների ու ժողովուրդների պատմության վերաբերյալ հայ միջնադարյան աղբյուրների մատուցած նյութերի հրատարակման ուղղությամբ[105]։

Մեծ աշխատանք է կատարված տեղեկատու գրականության ստեղծման ուղղությամբ։ Աղբյուրագիտական հսկայական արժեք է ներկայացնում հայ

---

99 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950։ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», 1—3 մասեր, Երևան, 1955, 1958, 1966, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան։ «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատ. 1—2, Երևան, 1954, 1956, կազմեց՝ Վ. Հակոբյան։

100 Կանոնագիրք հայոց, I, Երևան, 1964, կազմեց՝ Վ. Հակոբյան։

101 Օտար աղբյուրները հայերի մասին, 1. Ստրաբոն (կազմեց՝ Հ. Աճառյան), Երևան, 1940, 2. Իբն-ի Բատուտա (կազմեց՝ Հ. Աճառյան), Երևան, 1940, 3. Տակիտոս (կազմեց՝ Պ. Սոտնիկյան), Երևան, 1941։

102 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմող՝ Ա. Խ. Սաֆրաստյան, հատ. Ա, Երևան, 1961, հատ. Բ, 1964։ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմող՝ Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965։ Բյուզանդական աղբյուրներ, Ա. Պրոկոպիոս Կեսարացի, կազմող՝ Հ. Մ. Բարթիկյան, Երևան, 1967։

103 Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. 1, 1934, հատ. 2, 1936, հատ. 3, 1955, Երևան։

104 Հ. Աճառյան, Հայ-պարսկական հարաբերությունների փաստաթղթեր, Երևան, 1947։ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932։ Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ 1, Երևան, 1956, պրակ 2, Երևան, 1959։ Ա. Սաֆրաստյան, Մ. Զուլալյան, Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XIV—XVIII դդ.), Երևան, 1964։ Հ. Բարթիկյան, Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրները, Երևան, 1961։

105 Հ. Ս. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957։ А. Галстян, Армянские источники о монголах, М., 1962.

անձնանունների հինգհատորյա բառարան՝ Հ. Աճառյանի կազմած այդ բացառիկ կարևոր, կապիտալ աշխատությունը։ Այնտեղ բերված են հայ միջնադարյան գրականության մեջ հանդիպող բոլոր անձնանունները և տրված են հայ հին գրականության, պատմագրության և մշակույթի գործիչների կենսագրությունները[106]։

Աղբյուրագիտական իր նշանակությամբ մեծ երևույթ էր Հ. Ս. Անասյանի աշխատության առաջին հատորի լույս ընծայումը. դա տեղեկատու հրատարակություն է, ուր ներկայացված է հայ ժողովրդի դարերի ընթացքում կուտակած գրական ժառանգությունը, տրված է բոլոր աղբյուրների, նրանց ձեռագրերի և նրանց ուսումնասիրման գիտական բնութագրությունը[107]։

Հրատարակված է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հայերեն ձեռագրերի ցուցակի առաջին հատորը[108]։

Պատմության օժանդակ գիտությունների բնագավառի կարևոր նվաճումներից են Հ. Մանանդյանի չափագիտական ուսումնասիրությունները[109]։ Ա. Դ. Աբրահամյանը աշխատություններ է հրատարակել հայ հնագրության վերաբերյալ[110]։

Մ. Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր կապիտալ աշխատության մեջ տվել է նաև պատմագրության պատմության սիստեմատիկ շարադրանքը, նրա պարբերացումը և գնահատականը[111]։

Այդ դարաշրջանի պատմագրության հարցերի վրա կանգ է առել նաև Լեոն իր «Հայոց պատմության» երկրորդ հատորում։ Հայ պատմագիրների գլալի մասի գաղափարախոսությունը խոր վերլուծության է ենթարկված Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներում»։ Միջնադարյան Հայաստանի պատմագրության պատմությունը հակիրճ ձևով շարադրել է Լ. Խաչիկյանը[112]։ Հայ հին և միջնադարյան պատմագրության ուսումնասիրության գործում իրենց ավանդն են ներդրել նաև Հ. Մանանդյանը, Ս. Մալխասյանը, Թ. Ավդալբեգյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ա. Աբրահամյանը, Դ. Սարգսյանը, Ս. Մելիք-Բախշյանը, Թ. Հակոբյանը, Դ. Աբգարյանը[113]։

---

106 Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն անձնանունների բառարան, հատ. 1—5, Երևան, 1942—1962։

107 Հ. Ա ն ա ս յ ա ն, Հայկական մատենագիտություն Ե—ԺԸ դդ., հատ. Ա, Երևան, 1959։

108 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, կազմողներ՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965։

109 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Կշիռները և չափերը հնագույն հայկական աղբյուրներում, Երևան, 1930։ Էրատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը (նաև գերմաներեն), Երևան, 1934։ О градусных измерениях меридиана и земной поверхности по древнеармянским источникам, ВДИ, 1950, № 2.

110 Ա. Դ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1949։ Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959։

111 Մ. Ա բ ե գ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, հատ. Բ, Երևան, 1946։ Առաջին հատորը նաև ռուսերեն՝ М. А б е г я н, История древнеармянской литературы, т. I, Ереван, 1948.

112 Տե՛ս Очерки истории исторической науки в СССР, т. I, М., 1955.

113 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934։ Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940։ Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Խորենացու «Պատմության» ժամանակագրական սկզբնադիրը վերականգնելու մի նոր փորձ, «Պատմաբանասիրական հանդես», 1964, № 4։ Կ. Մ ե լ ի ք-Օ հ ա ն ջ ա ն յ ա ն, Կիրակոս Գանձակեցու պատմության առաջաբանը, Երևան 1961։ Ե. Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն, Եղիշեի պատմության առա-

Սովետահայ պատմագրության մեջ զգալի աշխատանք է տարվել նաև Հայաստանի և սահմանակից երկրների (Անդրկովկաս) պատմական աշխարհագրության և քարտեզագրության ուսումնասիրության ուղղությամբ[114]։ Այդ ասպարեզում լուրջ հաջողությունների է հասել Ս. Տ. Երեմյանը, Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրությունն ու քարտեզագրությունը նոր աստիճանի բարձրացնելով։ Լույս է տեսել «VII դարի Աշխարհացույցին» նվիրված նրա աշխատությունը, որը գիտական մեծ արժեք է ներկայացնում[115]։ Այդ աշխատության մեջ հեղինակը քննում է հայ միջնադարյան աշխարհագրության և անտիկ աշխարհագրության կապերը։

* * *

Այսպիսով, սովետահայ պատմագիտությունը իր սկզբնավորումից մինչև օրս ձեռք է բերել նշանակալից հաջողություններ հայ ժողովրդի պատմության պրոբլեմների մշակման բնագավառում։ Սակայն նրա առջև կանգնած և լուծման ենթակա հարցերը էլ ավելի ծավալուն են ու կարևոր։ Հանրապետության պատմաբանների մոտակա խնդիրն է ավարտել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ձեռնարկած «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի լույս ընծայման գործը։

ջարանը, Երևան, 1957։ Ա. Աբրահամյան, Մովսես Խորենացի, Երևան, 1959 (ռուս.), նաև հայերեն, 1962։ Խորենացուն վերագրվող «Աշխարհացույցի» հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940։ Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944։ Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965։ Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966։ Գ. Աբգարյան, Սեբեոսի «Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965։ Ս. Մելիք-Բախշյան, Թ. Հակոբյան, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1959, նաև ռուսերեն, 1961 նույն հեղինակների՝ Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960։ Վ. Նալբանդյան, Եղիշե, Երևան, 1959։ Ա. Գ. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961։

114 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (նյութեր), հատ. 1, Երևան, 1951, հատ. 2, 1952, հատ. 3, 1954։ Ակնարկներ Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960։ Հ. Ս. Ստեփանյան, Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695—1955), Երևան, 1957։

115 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963։